

գային հաստատուիլ Պուքրէշի եւ շրջականերուն մէջ:

Միւս կողմէ Տօպրուճայի զանազան քաղաքներուն մէջ ալ հայութիւնը կը շատնար նոր գաղթականութեանց շնորհիւ:

Հաւանաբար սակայն քիչ մը նուազած էր Մուրուլայի հայութեան թիւը այդ միջոցին:

Պեսարապիոյ շրջանի հայութեան 1863 տարուան վիճակագրութիւնը (Մասեաց Աղաւնի, 1864, էջ 322) հետեւեալ թիւերը ցոյց կուտայ.—

Քիշնէվ.— Ծնունդ 25, մահ 26, հայ բնակչութիւն 492 (242 այր, 250 կին):

Ագֆերման.— Ծնունդ 19, մահ 19, հայերու թիւ 869 (412 այր, 457 կին):

Օրեիյ.— Ծնունդ 2, մահ 2, հայերու թիւ 234 (125 այր, 109 կին):

Հօթիմ.— Ծնունդ 0, մահ 1, հայերու թիւ 51 (25 այր, 26 կին):

Պըլց.— Ծնունդ 8, մահ 1, հայերու թիւ 105 (51 այր, 54 կին):

Հրնէխք.— Ծնունդ 7, մահ 6, հայերու թիւ 229 (121 այր եւ 108 կին):

Պեսարապիոյ 6 հայաբնակ քաղաքներուն մէջ 1863-ին պատահած են ուրեմն 80 ծնունդ, 57 մահ:

Հայերու թիւը եղած է 1980, որուն 976-ը այր եւ 1004-ը կին:

Պուքուլինայի մէջ հաւանաբար 3000 հայու չափ կը գտնուէր թիւ. դարու կիսուն: Չերնովիցիի հայ ազգայիններուն կողմէ հայ ժողովուրդին ուղղուած կոչ մը (Մասեաց Աղաւնի, 1864, էջ 268) Չերնովի մէջ հայ եկեղեցիի մը հիմնարկութեան պէտքը ցոյց կուտայ, կ'ըսէ թէ «Պուքուլինայի մէջ հազար ընտանիքէն աւելի մեր ազգէն կը գտնուին», թէ «Չերնովիցիի մէջ մեր պաշտամունքը կատարելու ուրիշ տեղ չունինք՝ բայց եթէ հոռոմէական Ուղղափառ եկեղեցւոյն մէջ մեզի շնորհուած խորան մը», եւ թէ «հայ պաշտաման նուիրուած եկեղեցի մը չինելը պիտի ըլլայ կրօնական, ազգային եւ ընտանեկան միութեան զօգ մը»:

Այդ շրջանին պէտք է քիչ մը նուազած ըլլայ սակայն Թրանսիլվանիոյ հայութեան թիւը, որովհետեւ արդէն սկսած էր գաղթի հոսանք մը դէպի Հունգարիոյ ուրիշ շրջանները:

Ու գումար մը հանելու համար այս նօթերէն, 21,000 կ'ենթադրեմ ուսմանահայութեան թիւը թիւ. դարու կէսերուն, 5000՝ Մուրաւա, 8000՝ Թրանսիլվանիա, 3000՝ Պուքուլինա, 2000՝ Պեսարապիա, 1500՝ Մունթէնիա, 1500՝ Տօպրուճա, ուսմանահայութիւն բառով հասկընալով անշուշտ արդի Ռումանիոյ սահմաններուն մէջ ինկող շրջանները:

* * *

Վիճակագրութիւններ չունինք նաեւ թիւ. դարու վերջին քառորդին մասին:

1872-ին կրօնական եւ հանրային կրթութեան նախարարութիւնը իր 7812 թիւ պաշտօնագրով Պուքրէշի ազգ. Հոգաբարձութենէն կը պահանջէ Ռումանիոյ մէջ գտնուող հայ քահանաներուն եւ սարկաւադներուն թիւը: Պուքրէշի Հոգաբարձութիւնը իր կարգին շրջաբերականով մը այդ առթիւ տեղեկութիւններ կը պահանջէ Պաքովի, Իսմայէլի, Ռոմանի, Պոթոշանի, Ֆօքշանի եւ Եաշի Թաղականութիւններէն:

Հետաքրքրական է աչքէ անցնել ստացուած պատասխանները.—

Ռոմանի «հայոց ազգ. կառավարութիւնը» կը պատասխանէ թէ քաղաքին մէջ մէկ հայոց եկեղեցիի կայ, որուն ծառայութեան մէջ կը գտնուին երեք քահանայ, երկու դպիր եւ հայ պատանի մը, որ հայութեան ծախքով իր ուսումը կը շարունակէ տեղոյն կղերիկոսարանին մէջ. ասկէ զատ ամէն կիրակի եւ տօնի օրեր ազգային ժողովրդական դպրոցի ձայնաւոր աշակերտները սպասաւորութեան եւ զբոսարկութեան պաշտօն կը կատարեն:

Պոթոշանի «հայոց Ազգ. Հոգաբարձութիւնը» կ'իմացնէ թէ հայերը երկու եկեղեցի ունին, երկերկու քահանայով եւ երկերկու ձայնաւոր դպիր ու սպասաւորով:

Ֆօքշանի «Լուսաւորչական հայոց Ազգ. Հոգաբարձութիւնը» կը պատասխանէ թէ քաղաքին մէջ կը գտնուին երկու հայ եկեղեցիներ, որոնցմէ մէկը վոյց է եւ տարին միայն մէկ քանի անգամ պաշտօն կը կատարուի հոն, եւ թէ կան երկու քահանայ եւ երկու դպիր:

Թրիօ-Օքնայի «Լուսաւորչական հայոց ազգ. Հոգաբարձութիւնը» կը գրէ թէ